

նրօք այդ եկեղեցական բաժանումների մէջ դաւանութեան և գաղափարի տեսակէտից այնչափ քիչ խարութիւն կայ, որ բառական կլինի վերացնել անցեալում տեղի ունեցած հակառակութիւնները, և նոքա իրենք իրենց կմիանան: Կանագայում ևս նոյնպիսի շարժում նկատուում է և արդէն սկսել է դորձնական հետեւանքներ ունենալ: Թէ այսուղ, թէ Միացեալ նահանգներում շարժման զեկալարները Մեթոդիստներն են:



### Պ Ե Յ Բ Ա Թ Ո Ռ Ո

**Նոր Տարի.**—**Մայր Աթոռի միաբանութիւնն այս անգամ** բաղդ ունեցաւ կրկին իւր հայրախնամ Դիտապետի շուրջը բոլորած ողջունելու կաղանդն ու նոր տարին: Վեհարանի գրսի ընդունելութեան դահլիճում տարուայ վերջին երեկոյեան սեղան էր սպատրաստած՝ մրգեղինով և քաղցրեղինով: Մոտ ժամը 7-ին, երբ բոլորեքեան խմբուած էին, բարեհաճեց ներս գտ նորին Վեհափառութիւնը և իւր ներկայութեամբ, իւր խիստ սիրալիք վերաբերմունքով, իւր զուարձաբանութիւններով համեմած իմաստուն և ազգուխրատներով մեծապէս նորառեց հանդիսաւոր ժամի խորհուրդն ըմբռնելու և ծշմարիտ հոգեւոր ուրախութիւն զգալու:

Վեհափառ Հայրապեալ, Միաբանութեան կենացն առաջարկելով՝ բացատրեց հանգամանօրէն, որ մարդիկ ապրում են մի գործ կատարելու, մի յիշատակ թողնելու համար: Իւրաքանչիւրն ունի կատարելու գործեր և չպէտք է սպասէ, որ ուրիշներն յիշեցնեն իւր պարտքը. այսպիսի միաբանութեան համար յատկապէս պարզ պէտք է լինի, որ համերաշխ գործունէութեամբ միայն կարելի է պարտքը հատուցանել: Նորին Վեհափառութիւնն իրը և օրինակ միաբանական սիրոյ և համերաշխութեան յիշեց, թէ տեսել է Երուսաղէմի մի լատինական վանքում պատի վերայ լատիներէն մեծ մեծ

տասերով գրուած քառասունի չափ կրօնաւորական կեանքի կանոններ, որոնց բոլորին կցորդուած էր նոյն «միասին» բառը. «ապրել միասին, գործել միասին, խնդալ միասին, ողբալ միասին, հանգչել միասին», և լուսաբառութիւնները՝ կցելով իւրաքանչիւրին իւր բացատրութիւնները:

Ժամը 7<sup>4</sup> անց էր, երբ մեկնեցաւ նորին Վեհափառութիւնը՝ թողնելով ներկայ եղողներին զգացուած, շատ խոր և քաղցր տպաւորութիւնների ներքոյ:

Միւս օրը նոր Տարու առթիւ, ըստ սովորութեան, Մայր Տաճարում պատարագ կար, որից առաջ կատարուեց Հայրապետական և յետոյ Կայսերական մազմանք: Ապա Ն. Ս. Օծութեան աջն առնելու դնացին Միարանութիւնը, ձեմարանի ուսուցչական խումբն ու աշակերտները և բաւական թուով մարդիկ Վաղարշապատի հասարակութիւնից և ուրիշ տեղերից:

Նորին Վեհափառութիւնը Միարանութեան ուղղած խօսքերի մէջ առանձին ուրախութիւն յայտնեց, որ վերջերս նոր երիտասարդ անդամներ աւելացան նորա վերայ, և այժմ նկատելի բազմութիւն է տեսնում իւր առաջ,—կրարեմազթէր, որ ոչ ոք նրա միջից չպակսի. ապա խօսքն ընդհանրացնելով՝ յորդորեց, որ բոլորն էլ աշխատեն Մայր Աթոնի հասարակութեան ու բարօրութեան համար:

---

Ճրագալոցի երեկոյեան ևս Վեհափառ Հայրապետը բարեհածեց վանքի սեղանատուն իջնել, ուր ըստ սովորութեան վառած մոմերով և «Խորհուրդ Մեծ» շարականը երդելով դիմեցին Միարանութիւնը, ձեմարանի սաները, պատահական հիւրեր:

Միւս օրը պատարագին էր Սինօղի աւագ անդամ Գեր. Արիստակէս արքեպիսկոպոսը: Պատարագից յետոյ կատարուեցաւ ս. Մկրտութեան կարդը՝ ներսիսեան լճի վերին

աւազանում, նախապատրաստուած տաղաւարի ներքոյ: Այդ շքեղ հանդիսին ներկայ էր խուռն բազմութիւն: Վեհափառ Հայրապեաը յոզնութիւն զգալով շմանակցեց հանդիսին և շնորհաւորական այցելութիւններ չընդունեց: Մակայն ճաշին ներկայ եղաւ և մի սրտառուչ ճառով բացատրեց Ծննդեան տօնի նշանակութիւնը՝ ս. Գրքի վկայութեանց համաձայն ցոյց տալով, որ Փրկիչն աշխարհ եկաւ ինչպէս արդարների, այնպէս և մեղաւորների համար, և թէ Նրան երկնային բարձրութիւնից մինչև Բեթղեհէմի մսուրը խոնարհեցնողը այն անսահման սէրն էր, որ Նա ուներ դէպի մարդկութիւնը: Ապա օրհնելով Միաբանութեան և Հոյ ժողովուրդի կեանքը՝ ելաւ վեհարան հանգստանալու: Միաբանութիւնը խորին շնորհակալութեամբ և ոգեսորութեամբ Ն. Վեհափառութեան կենացը խմեց և շարունակեց ճաշը, ըստ սովորականին մի քանի բաժակների և երգերի ընդմիջումներով:

Ա. Տոյս 14-ին՝ ս. Յովհաննու Մկրտչի տօնի օրը, սովորական շքով տեղի ունեցաւ և ազգիս Սրբազնագոյն Հայրապետի անուանակոչութեան տօնախմբութիւնը: Նախընթաց երեկոյեան նախատօնակին, ցուրտ եղանակի պատճառաւ, Նորին Վեհափառութիւնը եկեղեցի իջաւ առանց հանդիսաւոր թափորի: Ներկայ եղաւ նաև առաւտօտեան ժամերգութեան, որից յետոյ Միաբանութիւնն ու ձեմարանի աշակերտները Նորին Ա. Օծութեան աջը առին: Պատարագին և հանդիսաւոր ձաշկերոյթին Նորին Վեհափառութիւնը չկարողացաւ ներկայ գտնուիլ: Պատարագիչն էր Գեր. Մակար եպիսկոպոս պատարագից յետոյ կատարուեցաւ Հայրապետական մաղթանք:

Ճաշին հրաւիրուած էին, բացի Միաբանութիւնից, ձեմարանի ուսուցիչներ և Մայր Աթոռում գանուած հիւրեր: Առաջին բաժակն առաջարկեց Գեր. Մեսրոպ Սրբազնը՝ Վ. Հ. Հայրապեաի կենացը, որից յետոյ ուրարակիր Սպիրիդոն Մելիքեանը երգեց «Տէ՛ր Կեցո» օրհներգը՝ մտանակցութեամբ ձեմարանական երգեցիկ խմբի:

Նրեկոյեան ձեմարանում կար դրական հանդես, որին  
ներկայ էին և ուսանք Միարանութեան անդամներից:

Ցնդեան տօնելը միարանակիցների հետ կատարելու  
համար Մայր Աթոռ Էր եկել Ասնաշնի վանահայր Գեր-  
դարեդին եպիսկոպոս և տաներից յետոյ վերադարձաւ իր  
պաշտօնավորը:

Տիմիսիս ս. Սորգոսի նախկին վանահայր Տ. Մամբրէ վար-  
դապետ Վեհապետ Հայրապետի հրամանաւ Մ. Աթոռ կո-  
չուելով՝ յունուար 11-ին այսուեղ եկաւ և կարգուեց տեսուչ  
տպարանի:

Մայր Աթոռից մեկնեցին Տ. Արտակ և Տ. Զաւէն նոր-  
ընծայ աբեղաները՝ առ Հայրենիք, կարճ ժամանակով ծնօղնե-  
րին այցելելու, բար Մոսկուա շարունակելու համար իրրե-  
պատ ունկնդիր Լսել համալսարանում:

Տիմիսս ուղևորուեց և վերադարձաւ Առողջատականի  
առաջնորդ Տ. Եղիշէ Տ. Վուրագեան՝ կարսի կալուածոց  
յոյանի դատական գործի համար կարեւոր տեղեկութիւններ  
հաղորդելու փաստաբանին և աջակցելու դատավարութեան  
միջոցին: Դարձ վաստակեց Եկեղ. վարչութիւնը:

